ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Սերգեյ Գրինյան

Հոդվածում հեղինակը ներկայացնում է իր կարծիքը ԱՊՀ երկրների ֆինանսական և ապրանքային, առաջին հերթին՝ էներգետիկ շուկաներում ստեղծված իրավիճակի մասին: Նշվում է, որ ընթացիկ իրավիճակը բնութագրվում է բարձր դինամիկայով և ԱՊՀ տարածքում ինտեգրման գործընթացների նկատմամբ ընդհանուր բացասական ուղղվածությամբ: Ցույց է տրվում, որ համաշխարհային ֆինանսական համակարգի աճող անկայունության պայմաններում ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները, անտեսելով ծախսերը, ավելի մեծ ջանքեր են գործադրում սեփական գերիշխանության «ստատուս քվոն» պահպանելու համար: Նշվում է նաև, որ Ռուսաստանը, ձգտելով վերականգնել ազդեցությունն ԱՊՀ տարածքում, ջանում է օգտագործել ոչ միայն էներգետիկական քաղաքականության լծակը, այլև դիմում է տնտեսությունների փոխադարձ ինտեգրման անհրաժեշտությանն ուղղված տնտեսական այլ համոզչամիջոցների:

Ներկա իրավիճակի հատկանշական կողմերից մեկը ԱՊՀ տարածքի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական բավական արմատական և պլանաչափ վերաձևումն է: Մի կողմից՝ շարունակվում է հետխորհրդային տարածքն ըստ տարբեր տեսակի կազմակերպությունների (ՎՈՒԱՄ, ԵՄ, ՆԱՏՕ) «քաշքշելը»՝ առանց Ռուսաստանի մասնակցության: Մյուս կողմից՝ Ռուսաստանը, գտնվելով պատմական զարգացման նոր փուլում, ակտիվորեն վերանայում է իր հարաբերություններն ԱՊՀ երկրների հետ, առաջին հերթին՝ էներգետիկ քաղաքականության ոլորտում:

Վերջին տարիներին էներգակիրների շուկայում ստեղծված բարենպաստ իրադրությունը, ինչպես նաև Ռուսաստանի տնտեսության «առողջացմանն» ուղղված մի շարք միջոցառումները թույլ են տալիս խոսել երկրի զարգացման նոր փուլի սկզբի մասին: Այս փուլում լուծում պետք է ստանան մի շարք կարևորագույն խնդիրներ, որոնք կապված են կենսամակարդակի էական բարձրացմանն ուղղված առկա ենթակառուցվածքային նախագծերի արդիականացման և նորերի ստեղծման հետ, ինչն ընդհանուր առմամբ պետք է ապահովի Ռուսաստանի՝ որպես ուժի ինքնուրույն կենտ-

րոնի, կայացումը XXI դարի իրողությունների պայմաններում:

Այնինչ, համաշխարհային առևտրի և ֆինանսական շուկայի վիճակն այսօր լուրջ երկյուղների տեղիք է տալիս ոչ միայն ռուս, այլև օտարերկրյա տնտեսագետներին: Մի կողմից՝ վերջին տարիներին օտարերկրյա գործընկերների հետ փոխգործակցությունը ցույց տվեց, որ Ռուսաստանը և ռուսաստանյան կապիտալը բոլորովին պետք չեն Արևմուտքում: Ավելին, ըստ մեր «գործընկերների»՝ ռուսաստանյան կապիտալը լուրջ վտանգ է ներկայացնում արևմտյան երկրների տնտեսության համար: Պատահական չէ, որ եվրոպական մի շարք երկրներում և ԱՄՆ-ում վերջին ամիսներին ակտիվորեն զարգանում են արդյունաբերությունում օտարերկրյա ներդրումներն արգելակող մեխանիզմներ: Ռուսաստանյան *ՎՏԲ* բանկի կողմից եվրոպական աերոտիեզերական *EADS* հոլդինգի ընդամենը 5% բաժնետոմսերի ձեռքբերումը Եվրամիությանն առիթ տվեց խոսել վտանգի մասին, թե Ռուսաստանի, Չինաստանի և մերձավորարևելյան երկրների՝ միլիարդավոր դոլարներ տնօրինող պետական ներդրումային ֆոնդերը կարող են մոտ ապագայում գնել եվրոպական խոշորագույն ընկերությունները: ԵՄ առևտրի գծով հանձնակատար Փիթըր Մանդելսոնը *Handelsblatt* թերթին հայտարարել է, որ որպես հակազդեցություն Եվրահանձնաժողովն առաջարկում է վերադարձնել, այսպես կոչված, «ոսկե բաժնետոմսերի» համակարգը: Եվրամիությունը կկարողանա արգելափակել ռազմավարական ճյուղերի գործարքները՝ այս կամ այն առանցքային ընկերությունը պաշտպանելով օտարերկրյա «կլանումից»[1]: Եվ սա՝ շուկայական տնտեսության մասին անընդհատ ընթացող խոսակցությունների պայմաններում: Օտարերկրացիներն իրենք այս առիթով կատակում են. «...մենք հանգիստ ենք, քանի դեռ ռուսները մեզնից գնում են միայն ֆուտբոլային ակումբներ և զբոսանավեր»:

Մյուս կողմից՝ որպես ուժի ինքնուրույն կենտրոն հաստատվելու՝ Ռուսաստանի առջև դրված խնդիրը կարող է լուծվել միայն համաշխարհային տնտեսությունում երկրի դերի հստակեցման պարագայում: Ռուսաստանին առայժմ հաջողվում է իր համար բարենպաստ հարաբերություններ կառուցել միայն մի ոլորտում, որն է էներգակիրների առևտուրը, բայց դա էլ քիչ չէ բարդ և երկարատև աշխատանք սկսելու համար:

Այնինչ, նոր աշխարհատնտեսական նախագծի իրականացման առաջին իսկ քայլերից արդեն Ռուսաստանը բախվում է մի ամբողջ շարք գերբարդ խնդիրների, ընդ որում՝ դրանք հարկ է լինում լուծել խիստ անկայուն և մասամբ՝ թշնամաբար տրամադրված շրջապատի պայմաններում: Եվ այդ պայքարի լարվածությունն ավելանում է այնքանով, որքանով ավելի կայուն է դառնում Ռուսաստանի դիրքը համաշխարհային շուկայում:

[1] http://www.rbcdaily.ru/print.shtml?2007/07/24/focus/284364
http://www.gzt.ru/business/2007/07/20/221745.html

1. Դոլարի տիրապետության համար պայքարը նոր է սկսվում

Վերջին ժամանակներս, ԱՄՆ անընդհատ աճող արտաքին պարտքի համատեքստում, որն ըստ որոշ գնահատականների՝ մոտենում է $50 տրլնին[1], համաշխարհային տնտեսությունում ակտիվանում են ազդեցության ոլորտների, էներգետիկ, հումքային և ֆինանսական շուկաների վերաբաժանմանն ուղղված մի շարք գործընթացներ:

Նման գործընթացների զարգացումն առավել ցայտուն արտացոլվում է համաշխարհային ֆոնդային շուկայում, որտեղ վերջին ժամանակներս, 8-9 ամիսը մեկ պարբերականությամբ, զարգանում են ճգնաժամային երևույթներ, որոնք հանգեցնում են ֆոնդային համաթվերի մեծությունների էական նվազման: Ընդ որում՝ այդ ճգնաժամերից ամենից շատ տուժում են զարգացող շուկաները՝ ռուսաստանյան, չինական, բրազիլական: Միևնույն ժամանակ, փորձագետները կարծում են, որ որոշ գնահատականներով մոտ ապագայում բացասական գործոններն ավելի կաշխուժանան: Մասնագետները նշում են, որ մեծ է այն բանի հավանականությունը, որ դրանք ազդեցություն կգործեն Ռուսաստանի ֆինանսական համակարգի և ֆոնդային շուկայի վրա: Դրանք այն երկրներն են, որոնք ունեն հումքային և էներգետիկ մեծ պաշարներ և ձգտում են իրականացնել դրանց օգտագործման ինքնուրույն քաղաքականություն: Արդեն նշմարվել են համաշխարհային բանկային համակարգի վերախմբավորման, ռուսական նավթագազային ընկերությունների կապիտալացման նվազման, հօգուտ ԱՄՆ-ի իրեն ոչ ձեռնտու միջազգային համաձայնագրերը վերստուգման ենթարկելու միտումներ:

Բացի այդ, մեծ կարևորություն և նշանակություն տալով էներգառեսուրսների շուկայի նկատմամբ վերահսկողությանը՝ արևմտյան մի շարք առաջատար երկրներ և, առաջին հերթին, ԱՄՆ-ը, որոնք չունեն բնական հումքի բավականաչափ պաշարներ, ընտրել են էներգառեսուրսների համաշխարհային շուկայի նկատմամբ սեփական վերահսկողություն սահմանելու ուղին. վերահսկողության տակ են վերցվել էներգետիկ հումքի շուկայի ձևավորման գործընթացները և ենթակառուցվածքը: Արդյունքում՝ այսօր համաշխարհային տնտեսությունում ստեղծվել է մի իրավիճակ, երբ շուկայի ողջ ենթակառուցվածքը՝ էներգակիրների գնագոյացումից մինչև դրանց մատակարարման իրականացումը և պայմանագրերի իրավաբանական ապահովումը, վերահսկվում է ԱՄՆ-ի կողմից, իսկ հումք մատակարարող երկրները զրկվել են իրենց ապրանքի գինը սահմանելու գործընթացին մասնակցելու հնարավորությունից: Մի շարք դեպքերում շուկայական ենթակառուցվածքն օգտագործվում է այդ երկրի արտաքին քաղաքական

[1] http://www.financialsense.com/fsu/editorials/martenson/2006/1217.html

նպատակներին հասնելու համար:

Նորագույն պատմությանը լավ հայտնի են, այսպես կոչված, «նավթային զենքի» կիրառման փաստեր, երբ ԱՄՆ վարչակազմի և մերձավորարևելյան նավթարդյունահանող երկրների պայմանավորվածության արդյունքում սահմանվել են նավթի կամայական գներ, ինչը գլոբալ տնտեսական ճգնաժամերի պատճառ է դարձել: Ի թիվս այլոց՝ տնտեսական ճնշման միջոցների կիրառման լավագույն օրինակ է XXդ. Խորհրդային Միության և ամբողջ սոցիալիստական ճամբարի փլուզումը:

Տեղեկատվություն հայտնվեց այն մասին, որ ԱՄՆ Կոնգրես է ներկայացվել մի օրինագիծ[1], որը պարտավորեցնում է բոլոր ընկերություններին (ոչ միայն ամերիկյան), որոնք համագործակցում են «անցանկալի երկրների» (ըստ ամերիկյան տերմինաբանության) հետ, ինչպիսիք են Իրանը և ԿԺԴՀ-ն, անցնել դելիստինգի (հեռացում գնանշման ցուցակներից) ընթացակարգ ամերիկյան բորսաներում, ինչն ինքնաբերաբար հանգեցնում է նրան, որ օտարերկրյա ներդրողները վաճառեն նման ընկերություններում բաժնետիրական կապիտալի իրենց պատկանող բաժինը: Դրան հետևում է նման ընկերությունների ընդհանուր ֆինանսական վիճակի կտրուկ վատթարացում: Ամերիկյան իշխանությունների նման քաղաքականությունը նշանակում է, որ վերջիններս պարտադրում են իրենց կամքը օտարերկրյա ընկերություններին, ինչը բացահայտ սպառնալիք է նման միջոցների ազդեցությանը ենթարկվող յուրաքանչյուր երկրի ազգային շահերին:

Այս նույն համատեքստում ս.թ. ապրիլի 6-ին ԶԼՄ-ում տեղեկատվություն հայտնվեց այն մասին, որ ֆինանսական կարգավորման և հսկողության *(FSA)* բրիտանական վարչությունը մտադիր է խստացնել օտարերկրյա ընկերությունների *IPO* (բաժնետոմսերի առաջնային բաշխման) անցկացման կանոնները[2]: *FSA-ն* նշում է, որ այն օտարերկրյա ընկերությունների նկատմամբ պահանջները, որոնց բաժնետոմսերը ներկայացված են Լոնդոնի ֆոնդային բորսայում *(LSE),* չափազանց լիբերալ են, ինչը մեծացնում է ներդրողների ռիսկը: *FSA* հայտարարություններն առաջին հերթին առնչվում են ռուսական ընկերություններին, որոնք ապահովում են տեղաբաշխման հիմնական բաժինը *LSE-ում:* Սա, ըստ փորձագետների գնահատականների, կարող է հանգեցնել նրան, որ ռուսաստանյան մի շարք էմիտենտներ կհրաժարվեն տեղաբաշխումներից արևմտյան հարթակներում:

[1] http://www.kommersant.ru/doc.aspx?DocsID=766349
[2] http://www.kommersant.ru/doc.aspx?DocsID=756749

2. Ասիական վեկտոր

Իրադրության զարգացման բավական կարևոր գործոն է իրավիճակն էներգակիրների ասիական (եվրասիական) շուկաներում: Ըստ փորձագետների մեծամասնության կարծիքի, Ասիայում ածխաջրածինների ներկայիս արտադրության ամբողջ ծավալից դատելով՝ XXIդ. տարածաշրջանը դառնում է ածխաջրածնային հումքի ամենամեծ արտադրողն ու դրա ամենախոշոր սպառողը: Սակայն գրեթե բոլոր նավթագազատարներն այսօր կենտրոնացած են Արևմուտքում և անցնում են արևմտյան ուղղությամբ: Այս իրավիճակում, ինչպես նշում են վերլուծաբանները, ակնհայտ է դառնում, որ ածխաջրածինների գլոբալ շուկայի՝ այսօր առկա կազմակերպումը ռացիոնալ չէ:

Մերձկասպյան տարածաշրջանում ածխաջրածինների մեծ պաշարների հայտնաբերումը և դրանց արդյունահանման աճը տարածաշրջանի երկրները վերածեցին համաշխարհային և տարածաշրջանային առաջատար երկրների շահերի բախման ասպարեզի: ԽՍՀՄ փլուզումից հետո այդ բոլոր երկրները ամեն ջանք գործադրում են հեռանկարային ածխաջրածնային հոսքերն «իրենցով անելու» համար: Այս պայքարում մեծ նպատակներ են դրվում. ակնկալվում է, որ մոտ ապագայում կասպյան տարածաշրջանը կդառնա ածխաջրածինների ամենախոշոր արտահանողը Պարսից ծոցից հետո[1]:

Հաշվի առնելով տարածաշրջանի զարգացման դրսևորվող միտումները՝ Իրանն այսօր սեփական նավթագազային բորսայի ստեղծման ակտիվ աշխատանքներ է տանում, որտեղ հաշվարկները կկատարվեն եվրոյով[2]:

Համաշխարհային էներգետիկ շուկայում լարվածության աճն արտացոլող ևս մեկ նախաձեռնություն է, այսպես կոչված, «գազային *OPEC*-ի» ստեղծման գաղափարը: Ս.թ. ապրիլի 9-ին Դոհայում տեղի ունեցավ Գազ արտահանող երկրների համաժողովի հերթական նիստը, որտեղ էլ ենթադրվում էր «գազային *OPEC-ի»* ստեղծումը: Գաղափարն առաջ է քաշվել Իրանի կողմից[3]: Շատ պետություններ այս առաջարկությունը հետաքրքիր համարեցին, մինչդեռ սպառող երկրները, ընդհակառակը, մտավախություն ունեն, թե «գազային *OPEC-ը»* մենաշնորհային դիրք կգրավի և կթելադրի իր պայմանները: Մասնավորապես, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն արդեն հայտարարել է, որ գազ արտահանողների միավորումը «շորթումների և կորզումների գլոբալ կազմակերպություն է»[4]:

«Գազային *OPEC-ի»* ստեղծման հեռանկարների շուրջ բարձրացված

[1] http://www.expert.ru/printissues/expert/2007/19/vizit_putina_v_srednyuyu_aziyu
[2] http://news.ntv.ru/83976
[3] http://eco.news.specialsoft.ru/readd.php
[4] http://lenta.ru/news/2007/04/04/opec1/

հիստերիան ուժգնանում էր 2007թ. առաջին եռամսյակի ողջ ընթացքում[1]: Հնարավոր նման միավորման մասնակից երկրների (Ռուսաստան, Իրան, Կատար, Ալժիր) ղեկավարներն ու բարձրաստիճան պաշտոնյաները հետաքրքրված են գաղափարով և բացեիբաց քննարկում էին այն տարբեր մակարդակներում: Մինչդեռ Բրյուսելում և Վաշինգտոնում նյարդայնանում էին, թեև օբյեկտիվորեն արտադրող երկրներից ոչ մեկը շահագրգռված չէ ստանձնել պատասխանատվությունը նման կարտելի շրջանակներում: Գազի վաճառքի համակարգն ինքը, որ հիմնված է մինչև նախագծերի իրականացումը ստորագրվող երկարաժամկետ պայմանագրերի վրա, գներով մանիպուլացման լայն հնարավորություններ չի տալիս: Մինչդեռ դրանց բարձր մակարդակը որոշվում է գազի աճող պահանջարկով՝ արդյունահանման մշակվող աղբյուրների սպառման և նոր հանքավայրերի յուրացման ու տրանսպորտային ենթակառուցվածքի ստեղծման գործում ներդրումներ անելու անհրաժեշտության պայմաններում:

3. Ֆոնդային շուկաները՝ վերահսկողության տակ

Հումքային շուկայում սաստկացող պայքարին զուգահեռ՝ ակտիվանում էր պայքարը նաև ֆինանսական շուկաներում գերիշխանության հասնելու համար: Այսպես, տարվա ամենահետաքրքիր իրադարձություններից մեկն էր ամերիկյան *NYSE*[2] բորսայի կողմից եվրոպական *EURONEXT* բորսայի կլանումը: Հարկ է նշել, որ դա տեղի ունեցավ, չնայած այն բանին, որ առաջատար եվրոպական երկրների (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա) ղեկավարները դեմ էին այդ միաձուլմանը. ԱՄՆ ճնշումն ավելի զորեղ գտնվեց:

Վերջին ամիսներին նկատելիորեն աշխուժացել են ռուսաստանյան ֆոնդային շուկայում (ռուսական ֆոնդային բորսաների բաժնետիրական կապիտալում) օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետ կապված գործընթացները: Մասնավորապես, շարունակում է զարգանալ «Սանկտ Պետերբուրգ» միջազգային բորսայի ստեղծման նախագիծը՝ *OMX* ընկերությունների շվեդական խմբի մասնակցությամբ: Այս նախագծի մասին կարելի է ասել նաև, որ *OMX* ընկերությունն ինքը ավարտում է բանակցությունները ամերիկյան *NASDAQ* բորսայի հետ հնարավոր միաձուլման շուրջ՝ 72% *(NASDAQ)*/28% *(OMX)* պայմաններով, ինչը կհանգեցնի ԱՄՆ ազդեցության տակ գտնվող երկրորդ *(NYSE-EURONEX-ից* հետո) վերազգային բորսայի ստեղծմանը, և ընդհանուր առմամբ ԱՄՆ վերահսկողության տակ կդնի համաշխարհային ֆոնդային շուկայի 70%-ը:

[1] http://www.vremya.ru/2007/76/8/177397.html
[2] http://lenta.ru/news/2006/05/22/nyse/
http://www.expert.ru/printissues/expert/2006/21/pervaya_mirovaya_birzha/

OMX խումբը, որը հետխորհրդային տարածքում արդեն վերահսկում է մերձբալթյան պետությունների բորսաները, բանակցություններ է վարում նաև ԱՊՀ երկրներում ևս մի ամբողջ շարք ֆոնդային բորսաների ձեռքբերման շուրջ: Արդեն հայտարարվել է, որ շուտով ավարտվելու են Երևանի ֆոնդային բորսայի գնման վերաբերյալ բանակցությունները[1], խոսում են նաև Ուկրաինայում[2] և Ղազախստանում[3] խմբի հայտնվելու հնարավորության մասին:

Հարկ է նշել նաև այն, որ 2007թ. հունիսի սկզբին Մոսկվայում բացվել է գերմանական *Deutsche Boerse* բորսայի ներկայացուցչությունը:

4. Ղազախական նախաձեռնությունը

2005թ. վերջից, ԱՄՆ անմիջական մասնակցությամբ, ակտիվ աշխատանքներ են տարվում Ղազախստանում, Ալմաթիում տարածաշրջանային ֆինանսական կենտրոն ստեղծելու ուղղությամբ: Ղազախստանի Հանրապետության նախագահի՝ Ալմաթիի տարածաշրջանային ֆինանսական կենտրոնի (ԱՏՖԿ) զարգացման հարցերով արտահաստիքային խորհրդական է նշանակվել Ջ.Վուլֆենսոնը՝ Համաշխարհային բանկի նախկին նախագահը: Նա անմիջականորեն մասնակցում է կենտրոնի զարգացման ռազմավարության մշակմանը, ինչպես նաև վերլուծում է կենտրոնի խորհրդատուների աշխատանքը[4]:

Փորձագետների կարծիքով՝ Ղազախստանի կառավարության որոշումը ԱՏՖԿ ստեղծելու մասին կարող է Կենտրոնական Ասիայում իրավիճակի զարգացման անբարենպաստ միտումների գիտակցման հետևանք և այդ միտումների հնարավոր զարգացման ուղղության վրա ազդելու փորձ լինել: Մասնավորապես, տարածաշրջանում իր ռազմական ներկայության տարիներին (2001թ. սեպտեմբերից), ինչպես նաև Անդիջանում (Ուզբեկստան) և Ղրղզստանում տեղի ունեցած իրադարձություններից հետո ԱՄՆ-ը ընդունեց, որ իր ուժային քաղաքականությունը տարածաշրջանում բավականաչափ արդյունավետ չէ: Բացի այդ, վերջին տարիներին այստեղ կտրուկ մեծացել է Չինաստանի տնտեսական ազդեցությունը: Այդ նույն տարիներին Ռուսաստանն աստիճանաբար կրճատում էր իր ներկայությունն այստեղ՝ վերակողմնորոշվելով Եվրոպայի և անմիջապես Չինաստանի հետ փոխգործակցության ուղղությամբ:

Ղազախստանն այս պայմաններում հայտնվում է ընտրության առջև. կամ կախման մեջ ընկնել չինական աճող հզորությունից, ինչը չի «տեղա-

[1] http://www.yerevan.ru/news/?task=detailed&id=4810
[2] http://gazeta.delo.ua/?date=2006-07-25&id=8708
[3] http://www.kazpravda.kz/index.php?uin=1151984397&chapter=1180641821&act=archive_date&day=1&month=6&year=2007
[4] http://www.kazpravda.kz/index.php?uin=1152853640&act=archive_date&day=4&month=11&year=2006

վորվում» Ղազախստանի արտաքին տնտեսական քաղաքականության մեջ, կամ պայմաններ ստեղծել երկրում օտարերկրյա, առաջին հերթին՝ արևմտյան կապիտալի մուտքի և հուսալի հաստատման համար: Հենց այս ճանապարհով էլ գնաց Ղազախստանը:

Փորձագետների կարծիքով՝ հարկային արտոնությունները, որ նախատեսվում են ԱՏՖԿ իրականացման համար, կհանգեցնեն նրան, որ ռուսաստանյան մի շարք ընկերություններ, առաջին հերթին նրանք, որոնք փոքր ու միջին կապիտալացում ունեն, կարող են իրենց բաժնետոմսերով առևտուր սկսել ԱՏՖԿ հարթակում: Բացի այդ, Ռուսաստանի կառավարության՝ ռուսական դեպոզիտար ստացականներ մտցնելու նախաձեռնությունը ԱՏՖԿ գործունեությունն սկսելուն պես նույնպես կարող է պահանջված չլինել, քանի որ ԱՊՀ երկրների ընկերությունների բաժնետոմսերը ռուսական բորսաների փոխարեն կտեղաբաշխվեն ԱՏՖԿ բորսայում:

Ինչ վերաբերում է այս նախագծին ղազախ փորձագետների գնահատականներին, ապա, նրանց կարծիքով, Ալմաթին՝ որպես ներդրումային կենտրոն, կարող է շահել ոչ միայն Կենտրոնական Ասիայում, այլև ամբողջ ԱՊՀ-ում, որտեղ նրա հիմնական մրցակիցը Մոսկվան է և ընդհանրապես Ռուսաստանը:

5. ՎՈՒԱՄ. ևս մեկ գործիք հանուն կասպյան ռեսուրսների Ռուսաստանի դեմ պայքարում

Առանձնապես սուր է Ռուսաստանի (որը հավակնում է տարածաշրջանային գլխավոր տերության դերին) և ԵՄ-ԱՄՆ զույգի (որը ձգտում է կասպյան տարածաշրջանից դեպի Եվրոպա ածխաջրածինների տեղափոխման՝ Ռուսաստանի նկատմամբ այլընտրանքային երթուղիներ ստեղծել) հակամարտությունը:

Այս առնչությամբ փորձեր են արվում մի շարք տարածաշրջանային կազմակերպություններ օգտագործել որպես ռուսական բիզնեսի առաջխաղացմանը դիմակայելու գործիք: Մասնավորապես, Ռուսաստանին դիմակայելու մեջ հաջողության հասնելու լուրջ հույսեր են կապում ՎՈՒԱՄ գործունեության հետ:

Ինչպես նշում են հայ վերլուծաբանները[1], ԱՄՆ քաղաքականությունը կովկասյան-կասպյան տարածաշրջանում բավական արագ է ձևավորվել: Դեռևս 1990-ական թթ. սկզբին սահմանվել են տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության շատ խնդիրներ: Սակայն այդ քաղաքականությունը երկար ժամանակ հատկանշական էր իր անարդյունավետությամբ և անհամարժեքությամբ: Նշվում է նաև, որ կովկասյան-կասպյան տարածա-

[1] http://www.noravank.am/file/article/241_ru.pdf

շրջանում, նավթարդյունահանման և դեպի համաշխարհային շուկաներ տեղափոխման խնդիրներից բացի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի առջև կանգնած է զուգահեռ խնդիր՝ թույլ չտալ, որ Ռուսաստանը և Իրանն օգտագործեն այդ էներգառեսուրսները, և որ գլխավորն է՝ բացառել այդ տերությունների վերահսկողությունը էներգահաղորդակցային ուղիների նկատմամբ: Տարածաշրջանի էներգառեսուրսների հարցում ԱՄՆ շահերը կիրականացվեն անկախ համաշխարհային էներգետիկ հավասարակշռության համար դրանց նշանակությունից[1]: Դա հերթական անգամ ի ցույց դրվեց մայիսի 25-ին Յալթայում, երբ ԱՊՀ կառավարությունների ղեկավարների նիստի արդյունքներով 6 մասնակից երկրներ (Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս, Ղրղզստան, Հայաստան և Տաջիկստան) համաձայնագիր ստորագրեցին ԱՊՀ պետությունների ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման մասին, իսկ մի շարք երկրներ, այդ թվում և ՎՈՒԱՄ անդամ բոլոր երկրները (Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա), հրաժարվեցին միանալ համաձայնագրին:

Կազմակերպության՝ աշխատանքներն ակտիվացնելու ձգտումն առավել ընդգծվեց ընթացիկ տարվա ամռանը Բաքվում կայացած նրա վերջին գագաթաժողովի ժամանակ: Գագաթաժողովի գործնական արդյունքները, կոնկրետ պայմանավորվածությունների և ներքին ինտեգրացիոն նախագծերի առաջքաշման տեսակետից, փորձագետների կողմից ստացել են «նվազագույն» գնահատականը: «Վուամցիներին ոտքի կանգնեցնելու» ամերիկացիների փորձը գագաթաժողովում հերթական անգամ չստացվեց:

Հանդիպման արդյունքներով ստորագրվեց Բաքվի հռչակագիրը: Փաստաթղթում, որն ստացավ «ՎՈՒԱՄ. միավորելով աշխարհամասերը» անվանումը, հաստատվում է, որ մասնակից երկրների շահերն առաջվա պես համընկնում են: Նրանք հետագայում ևս կջանան կառուցել միասնական տնտեսական տարածք և համատեղ լուծել սեփական անվտանգության հարցերը:

Միանգամայն բնական է, որ հատուկ ուշադրություն է նվիրվել էներգետիկական համագործակցությանը, մասնավորապես՝ Օդեսա-Բրոդի-Պլոցկ-Գդանսկ նավթատարի նախագծին: Կարևոր է նաև նշել, որ Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը գագաթաժողովում հայտարարեց, թե իր երկիրը կդառնա ՎՈՒԱՄ և Եվրոպայի երկրների հուսալի էներգետիկական գործընկերը:

Միևնույն ժամանակ, դեռևս մայիսի 11-ին Ռուսաստանի նախագահը վեցօրյա շրջագայություն կատարեց Ղազախստանում և Թուրքմենստանում: Այցերի գլխավոր նպատակն էր տարհամոզել Աստանային և Աշգաբադին տրանսկասպյան գազատարին միանալուց: Եվ դա հաջողվեց Վլա-

[1] http://www.noravank.am/file/article/241_ru.pdf

դիմիր Պուտինին: Ինչպես նշում է «Էքսպերտ» հանդեսը, շրջագայության ընթացքում միջինասիական պետությունների նախագահները հաստատեցին նավթագազային ոլորտում Ռուսաստանի հետ համագործակցության գերակա բնույթը: Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը հայտարարեց, թե «Ղազախստանը հակված է նրան, որ եթե ոչ ամբողջ հումքը, ապա դրա մեծ մասն անցնի հենց Ռուսաստանի տարածքով»: Բացի այդ, Նազարբաևը պայմանավորվել է Պուտինի հետ հյուսիսարևմտյան Ղազախստանից Ռուսաստան գնացող Կասպյան խողովակաշարային կոնսորցիումի տարանցիկ նավթատարի ընդլայնման մասին (ներկայիս 29 մլն տոննայի փոխարեն՝ 40 մլն)[1]:

Այս համատեքստում Օդեսա-Բրոդի-Գդանսկ խողովակաշարի թեման կրկին արծարծելու Կիևի և Վարշավայի հերթական փորձն իրատեսական չէր: Առանց ղազախական նավթի մայրուղին չի աշխատի:

Բացի այդ, Ադրբեջանն ունի էներգառեսուրսների որոշակի պաշարներ, բայց դրանց տերը այն արևմտյան ընկերությունների կոնսորցիումն է, որոնք արդյունահանում, տեղափոխում և իրացնում են այդ նավթը համաշխարհային շուկաներում: Ուստի, Ադրբեջանն առայժմ կարիք չունի հատուկ քաղաքական-տնտեսական հարաբերություններ հաստատել, օրինակ, Ուկրաինայի կամ Լեհաստանի հետ: Ռուսաստանը շրջանցող նոր երթուղիների անցկացման մասին նրանց հայտարարություններն իրականում էներգետիկական դիվանագիտության նմանակում են:

Այս միության նպատակը ի սկզբանե, ըստ փորձագետների, Ռուսաստանից իր անդամ պետությունների տնտեսական, առաջին հերթին՝ էներգետիկական կախվածության թուլացումն էր և էներգակիրների տարանցման զարգացումն Ասիա (Կասպիա) – Կովկաս - Եվրոպա երթուղով՝ շրջանցելով Ռուսաստանի տարածքը:

Տարածաշրջանում Ռուսաստանի հետ մրցակցությունն ակտիվացնելու ձգտումը հանգեցրեց նրան, որ ՎՈՒԱՄ-ն ի սկզբանե էական տնտեսական և քաղաքական աջակցություն էր ստանում ԱՄՆ-ից, քանի որ ՎՈՒԱՄ նպատակները համընկնում էին Վաշինգտոնի աշխարհաքաղաքական նպատակների հետ:

Սակայն, չնայած այս բոլոր ջանքերին, ՎՈՒԱՄ-ն ավելի շուտ գոյություն ունի որպես ֆորում բանավեճերի համար: Կազմակերպությունն աչքի չի ընկնում ոչ թարմ գաղափարներով, ոչ համագործակցության իր հայտարարած ուղղություններով աշխատելու պոտենցիալ հնարավորություններով: 2006թ. նրա վերափոխումից հետո որևէ բան էականորեն չի փոխվել: Օտարերկրյա մասնագետները կազմակերպության տնտեսական գործու-

[1] http://www.expert.ru/printissues/expert/2007/19/vizit_putina_v_srednyuyu_aziyu/

նեությունը գնահատում են որպես «ցածրարդյունավետ և գերազանցապես դեկլարատիվ»: Կազմակերպությունը շարունակում է մնալ ամորֆ կառույց՝ բարի նպատակներով և անորոշ հեռանկարով, մեծ հավակնություններով, բայց սահմանափակ պոտենցիալով: Ստեղծված իրավիճակում քչերը հույս ունեն, թե ՎՈՒԱՄ-ը կզարգանա նոր անդամների ընդունման միջոցով: Մասնավորապես, միությունում Ռումինիայի ներգրավման դիտարկվող պլաններն արդեն առաջ են բերել Մոլդովայի դժգոհությունը, ինչը չի վկայում այն մասին, որ կազմակերպությունում ամեն ինչ հարթ է ընթանում:

Ինչպես կարծում են փորձագետները, Մոլդովան իր գործունեությունը ՎՈՒԱՄ-ում չի դիտարկում որպես իր արտաքին քաղաքականության կարևոր, առավել ևս՝ գերակա ուղղություններից մեկը: Այդ կազմակերպության անդամ լինելուց Քիշնևն առայժմ «ավելի շատ հիմնախնդիրներ ունի, քան քաղաքական ու տնտեսական շահաբաժիններ», քանի որ ՎՈՒԱՄ որոշումների մեծ մասն ընդունվում է առանց մոլդովացիների կարծիքի ու շահերի հաշվառման, Կիևի ու Թբիլիսիի պայմանավորվածությունների արդյունքում, որոնք իրենց հերթին կատարում են այս կազմակերպությունը որպես Ռուսաստանին դիմակայելու միջոց օգտագործման մեջ շահագրգիռ ամերիկացիների հանձնարարականները: Քիշնևին ձեռնտու չէ ՎՈՒԱՄ-ում Ռումինիային ներգրավելու Վաշինգտոնի ձգտումը: Մոլդովացիները չեն ցանկանում նաև ՎՈՒԱՄ երկրների մեջ տեսնել ռազմավարական դաշնակիցների մերձդնեստրյան հիմնախնդրի լուծման և իրենց ազգային անվտանգության ապահովման գործում:

Կարևոր է նաև այն փաստը, որ Եվրամիություն ՎՈՒԱՄ երկրների կոլեկտիվ և արագացված մուտքի հարցը չի դիտարկվում: Եվրոպացիները, սակայն, կուզենային, որ այս կազմակերպությունն ավելի շուտ կողմնորոշվեր դեպի ԵՄ և ոչ թե ԱՄՆ: Բրյուսելը մտադիր է այսուհետ ևս հարաբերություններ հաստատել ՎՈՒԱՄ յուրաքանչյուր երկրի հետ առանձին՝ կախված այդ ասպարեզում դրանց «ժողովրդավարական» հաջողություններից: Այս մասին են վկայում ԵՄ գործողությունների անհատական ծրագրերը, որոնց համապատասխան՝ 2007-2010թթ. Ադրբեջանը կստանա €92 մլն, Վրաստանը՝ €120 մլն, Մոլդովան՝ €209 մլն և Ուկրաինան՝ €494 մլն: Այստեղ ի հայտ է գալիս նաև տարածաշրջանում ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև առկա դիմակայությունը, որոնք, մի կողմից, հանդես են գալիս տարածաշրջանում Ռուսաստանի ու Չինաստանի դիրքերի ամրապնդման դեմ, մյուս կողմից՝ մրցակցում են միմյանց հետ:

Տարածաշրջանի կայունության և անվտանգության համար կարևոր է նաև տարածաշրջանային խաղաղարար ուժերի ստեղծման հնարավորության մասին հարցը: Մ.Սահակաշվիլու և Վ.Յուշչենկոյի փորձերը՝ ՎՈՒԱՄ

շրջանակներում ստեղծել սեփական խաղաղարար ուժեր, մի շարք փորձագետների կարծիքով՝ շատ կասկածելի են և նույնիսկ հեռանկարազուրկ:

Որևէ միավորման կազմում համատեղ գործողությունների համար առաջին հերթին անհրաժեշտ են փորձառություն և գործնական տեսակետից՝ լուրջ պատրաստվածություն ՄԱԿ հովանու ներքո, ֆինանսական աղբյուրների առկայություն, միջազգային մանդատ: ՀԺՏԿ (Հանուն ժողովրդավարության և տնտեսական համագործակցության կազմակերպություն)-ՎՈՒԱՄ-ը՝ որպես միջազգային կառույց, ԱՊՀ տարածքում հակամարտությունները կարգավորելու մեխանիզմների չի տիրապետում: Փորձագետների գնահատումներով՝ տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման փորձերն առանց Ռուսաստանի մասնակցության, նրա ազդեցությանը դիմակայելու սկզբունքով, իրատեսական չեն: Ինչպես և նախկինում, միակ լուրջ ուժը տարածաշրջանում մնում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը:

Հատկանշական է, որ որոշ վերլուծաբանների[1] կարծիքով՝ ԱՄՆ-ը վերջին ժամանակներս ակտիվորեն զբաղվում է Կասպյան ավազանում անվտանգության համակարգի ստեղծման տարբերակների ուսումնասիրությամբ: Անվտանգության պայմանների ստեղծման գործում ՎՈՒԱՄ անհաջող փորձը ամերիկացիներին համոզեց այն բանում, որ տարածաշրջանում իր հիմնական գործընկերների ամրապնդման կողքին (վերլուծաբանների կարծիքով՝ դրանք Ղազախստանն ու Ադրբեջանն են) անհրաժեշտ է նաև իր մշտական ռազմական ներկայությունը:

6. Էստոնիան և ռուսաստանյան ռեսուրսների վերահսկողության Արևմուտքի գլոբալ նախագիծը

Էստոնիայում 2007թ. մայիսին տեղի ունեցած իրադարձությունները ստիպեցին շատերին այլ կերպ նայել իրավիճակի զարգացմանը նաև Ռուսաստանի արևմտյան սահմաններում: Փորձագետները համոզված են, որ խոսքը բազմապլան խաղի մասին է, որտեղ ոմանց սադրանքները և մյուսների ինքնաբուխ արձագանքն ընդամենը գործիքներ են: Մայիսի 8-ին ԳԴՀ նախկին կանցլեր Գերհարդ Շրյոդերը նախատեսում էր Տալլինում համաձայնեցնել Հյուսիսեվրոպական գազատարի երթուղու հարցը, բայց վարչապետ Անդրուս Անսիպը հրաժարվեց հանդիպել Շրյոդերի հետ իբր այն պատճառով, որ վերջինս մեղադրել էր էստոնացիներին «Բրոնզե զինվորի» հուշարձանի տեղափոխման հետ կապված պատմության համար: Դելավերի համալսարանի պրոֆեսոր Սերգեյ Լոպատնիկովի կարծիքով՝ «դեպի Եվրոպա

[1] http://www.noravank.am/file/article/235_ru.pdf

պատուհանի» շրջափակումը ի սկզբանե Անսիպի կառավարության նպատակն էր: Մասնավորապես, այս մասին է խոսվում *RBC-Daily-ի*[1] հրապարակումներից մեկում, որը բազմաթիվ արձագանքների և մեկնաբանությունների առիթ է տվել: Հոդվածում նշվում է, որ Էստոնիան այսօր վերահսկում է Ֆիննական ծոցի ելանցքը, որի լայնությունը Էստոնիայի և Ֆինլանդիայի միջև ամենանեղ տեղում չի գերազանցում 26 մղոնը: Միջազգային ծովային իրավունքն այս երկրներին թույլ է տալիս ծոցը հավասար կիսել՝ գործնականում չեզոք ջրերի տեղ չթողնելով: Եվ Ռուսաստանի ու Գերմանիայի միջև գազատար անցկացնելու համար տեղ չի մնում: 1990-ական թթ. Մոսկվայի ճնշմամբ Տալլինը և Հելսինկին ծոցի կենտրոնում 6 մղոնանոց գոտի թողեցին, բայց Հյուսիսեվրոպական գազատարի մասին խոսակցություններից հետո Էստոնիան վերադարձավ նախկին դիրքին: Էստոնիան և նրանք, ովքեր գտնվում են նրա թիկունքում, փորձում են օգտագործել «Բրոնզե զինվորի» հուշարձանի հետ կապված սադրանքը՝ Ռուսաստանին Բալթիկա դուրս գալու հնարավորությունից զրկելու համար: Ընդ որում՝ Ռուսաստանը կորցնում է ոչ միայն Հյուսիսեվրոպական գազատարը, այլև Բալթիկ ծովի նավահանգիստները, Բալթյան նավատորմը և Կալինինգրադի մարզը:

Հոդվածագիրներն արդարացիորեն նշում են, որ վերջին տարիներին առավել մեծ ակտիվությամբ փորձում են Մոսկվան ներկայացնել որպես ագրեսոր, և դատելով Արևմուտքի արձագանքից՝ այնտեղ դրան պատրաստ են (դա, մասնավորապես, ցույց տվեց Մեծ Բրիտանիայի հետ վերջին դիվանագիտական սկանդալը՝ Ա.Լուգովոյին չհանձնելու հետ կապված): Երկրորդ համաշխարհային պատերազմի իրողությունների վերանայումը և ռուսների նկատմամբ նոր Նյուրնբերգի կազմակերպումն ընթանում է արդեն ավելի քան 30 տարի: Արևմտյան պատմագրության մեջ Ռուսաստանն ավելի հաճախ է ներկայացվում ոչ թե որպես ֆաշիզմին հաղթող երկիր, այլ որպես տոտալիտար կայսրություն, որը Եվրոպան բաժանել է Հիտլերի հետ:

Կարելի է նշել նաև այն փաստը, որ Էստոնիայի պաշտպանության նախարարության պատրաստած վերլուծության (Բալթիկայում ռուս-գերմանական Հյուսիսեվրոպական ստորջրյա գազատարի անցկացման հետ կապված ռիսկերի վերաբերյալ) համաձայն՝ գազատարը լրացուցիչ ռիսկեր կստեղծի Էստոնիայի ռազմական անվտանգության համար, հաղորդում է «Ռոսբալթի» թղթակիցը[2]: Վերլուծությունը պատրաստել էր Էստոնիայի ՊՆ հետախուզական վարչությունը: Ըստ այդ հաշվետվության՝ ծովի հատակում գտնվող յուրաքանչյուր շինվածք հնարավոր է օգտագործել ռազմա-

[1] http://www.rbcdaily.ru/print.shtml?2007/05/10/focus/274940

[2] http://www.rosbalt.ru/2007/06/28/300366.html

կան նպատակներով. օրինակ, նավերի երթևեկին հետևելու կամ էլեկտրոնային հետախուզության համար:

Սակայն Ռուսաստանի «դիվականացումը» նույնպես ընդամենը գործիք է, համոզված են պատմաբանները: ՌԴ Պետդումայի պատգամավոր Նատալյա Նարոչնիցկայայի խոսքերով՝ Արևմուտքում ավելի հաճախ են խոսում այն մասին, որ այն երկրներն ու ժողովուրդները, որոնք «պատահականորեն» հայտնվել են ռեսուրսների հանքաշերտերի կողքին, չեն կարող լինել դրանց սեփականատերերը: Արևմուտքի խնդիրն է Ռուսաստանի ռեսուրսները ներառել իր գլոբալ նախագծում, և այն ամենը, ինչ դրան խանգարում է, սաստիկ զայրացնում է նրան:

Հետևություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած վերը թվարկված տարբեր իրադարձությունների թվացյալ անջատվածությանը՝ դրանք կազմում են մի ամբողջություն առաջին հերթին Ռուսաստանի էներգետիկական քաղաքականության վրա իրենց ազդեցության առումով:

Փորձագետները նշում են[1], որ դիտարկելով Ռուսաստանի շուրջ ծավալվող խաղն ու երկրի շահերը՝ կարելի է փաստել. պայքարի առաջին փուլն ավարտվել է ոչ ոքի: Ռուսաստանին հաջողվել է պահպանել գազի ոլորտում առաջատարի դիրքը և իրականացնել Կասպյան խողովակաշարային կոնսորցիումի նախագիծը, որն զբաղվում է Ռուսաստանի տարածքով ղազախստանյան նավթի տարանցմամբ: Եվրոպային և ԱՄՆ-ին, ինչպես նաև նրանց տարածաշրջանային դաշնակիցներին (Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան) հաջողվեց իրականացնել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խոշոր նավթատարի նախագիծը, որը մինչև օրս թերբեռնված է մնում: Ասպարեզում ի հայտ եկած ևս մեկ կողմի՝ Չինաստանին հաջողվեց իրականացնել Ղազախստանի տարածքով նավթատարի անցկացման նախագիծը և սկսել գազատարի անցկացման նույնանման աշխատանք:

Տարածաշրջանում Ռուսաստանի վարած քաղաքականությունը չի կարող չառաջացնել ԱՄՆ հակազդեցությունը, որը փորձում է Ռուսաստանին դիմակայելու մեջ ակտիվորեն ներգրավել իր արբանյակներին՝ ի դեմս ՎՈՒԱՄ-ի և ԵՄ երկրների:

Ընդհանուր բացասական մթնոլորտը խտանում է Իրանի շուրջ լարվածության խորացմամբ, Ռուսաստանի սահմանների հարևանությամբ զենքի ռազմավարական համակարգերի տեղակայմամբ, Ուկրաինայում քաղաքական ճգնաժամի հրահրմամբ, որն արդեն ծավալվում է տարրա-

[1] http://www.expert.ru/printissues/expert/2007/19/vizit_putina_v_srednyuyu_aziyu

կան տրամաբանությունից դուրս: «Հերթի մեջ» է իրավիճակի հնարավոր սրումը նախկին խորհրդային հանրապետությունների և Վարշավայի պայմանագրով Ռուսաստանի նախկին գործընկերների հետ: Ընդ որում՝ պետք է ընդունել, որ այս բոլոր՝ առաջին հայացքից տարաբնույթ իրադարձություններն իրականում սերտ կապակցված են և «կախված» Արևմուտքի ու Արևելքի էներգետիկական դիմակայության «թելից»:

Ակնհայտ է դարձել նաև, որ մոտ ապագայում բացասական գործոնների դրսևորումներն ավելի կուժեղանան: Դա առաջին հերթին վերաբերում է ռուսական ֆինանսական համակարգի և ֆոնդային շուկայի վրա հնարավոր ազդեցությանը:

Ռուսական էներգետիկական նախագծերի նկատմամբ սպառողների հետաքրքրության նվազման մեկ այլ գործոն կարող է դառնալ Կովկասում և Կենտրոնասիական տարածաշրջանին հարող տարածքներում ահաբեկչության ակտիվացումը: Մանավանդ որ վերջին ժամանակներս հատուկ ծառայությունների կողմից այս տարածքներում նկատվել է զենքի և զինամթերքի կուտակում ահաբեկչական կազմավորումների ձեռքին:

Չեն բացառվում նաև կազմակերպված ազգայնական տրամադրությունների դրսևորումները և դրանց ծավալուն լուսաբանումը օտարերկրյա «անկախ» լրատվամիջոցներում: Դա հատկապես հարմար է անել Ռուսաստանում ընտրարշավի նախապատրաստման ֆոնին, որն ակտիվացավ սեպտեմբերին՝ Ռուսաստան-Ղազախստան-Թուրքմենստան գազաթաժողովի ժամանակ:

Ընդհանրացնելով նշենք, որ Ռուսաստանն այսօր, փորձելով վերականգնել իր տեղն ու դերն աշխարհում, ստիպված է հաղթահարել խիստ կոշտ դիմադրություն արտաքին քաղաքականության գրեթե բոլոր ուղղություններով: Ընդ որում՝ այդ դիմադրությունն աճում է Ռուսաստանի կողմից իր մտադրություններն իրականացնելուն համեմատ: Կարելի է ենթադրել, որ նման «տնտեսական պատերազմը» կշարունակվի նաև այսուհետ, եթե, իհարկե, Ռուսաստանն ինչ-ինչ պատճառներով չհրաժարվի հայտարարած նպատակներից:

Հոկտեմբեր, 2007

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ФИНАНСОВЫХ РЫНКОВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ

Сергей Гриняев

Резюме

В статье отражено мнение автора по ситуации, сложившейся на финансовых и товарных, прежде всего энергетических, рынках стран СНГ. Отмечается, что текущая ситуация характеризуется высокой динамикой и общей негативной направленностью в отношении большинства интеграционных процессов на пространстве СНГ. Показано, что в условиях нарастания нестабильности мировой финансовой системы США и их союзники прикладывают, не считаясь с затратами, все больше усилий к сохранению «статус-кво» собственного доминирования. Отмечается также, что Россия, пытаясь восстановить свое влияние на пространстве СНГ, также стремится использовать не только рычаг энергетической политики, но и иные средства экономического убеждения партнеров в необходимости взаимной интеграции экономик.